ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

07.08.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 628-Ա

ՄԱՆՈՒՇ ՌԱԶՄԻԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 16-րդ հոդվածի 1.1 մասերով, հիմք ընդունելով «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետը, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու 07.08.2025թ. կայացած մրցույթի մրցութային հանձնաժողովի ներկայացրած «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 3 որոշումը և հաշվի առնելով Մանուշ Աբրահամյանի դիմումը,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2025 թվականի օգոստոսի 8-ից Մանուշ Ռազմիկի Աբրահամյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Ներքին Խնձորեսկի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:
2. Լուծել Մանուշ Աբրահամյանի հետ 2024թվականի հոկտեմբերի 10-ին կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. օգոստոսի 07
ք. Գորիս